228 Թևերդ, Տե՛ր իմ, թող ըլլան

1. Թևերդ, Տե՛ր իմ, թող ըլլան
Ինձ հովանի և ապաստան,
Հոն բնակիմ ես անվրդով՝
Ձերծ վտանգե և ապահով:

2. Այս աշխարհի կյանքի շրջան
Լի է վախով ամեն վայրկյան,
Թևերուդ տակ միայն, ո՛վ Տեր,
Կրնամ ապրիլ ես անվեհեր:

3. Արյուն, քրտինք հոսին ճակտես,
Կը հալածվիմ ոսոխներես,
Կուզեմ գտնել հանգիստ անձիս,
Թևերուդ տակ, խնդրեմ, ա՛ռ զիս:

4. Գողգոթայի սարին վրան
Լացող աչքերս թող Քեզ տեսնեն,
Տե՛ր իմ, խաչին շուքովը ես
Թող պաշտպանվիմ իմ մեղքերես:

5. Տե՛ր, տարածե՛ թևերդ իմ վրաս,
Անոնք ըլլան թող ինձ վրան,
Մինչև վերջին րոպեն կյանքիս
Թևերուդ տակ հանգչի հոգիս: